

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 17-18-ՐԴ  
ԴԱՐԵՐՈՒՄ

Պողոսյան Ն. (ԵՊՀ, Հայաստան)

[nornor@mail.ru](mailto:nornor@mail.ru)

Բանալի բառեր՝ աշխարհաբար, միասնական, արևմտահայ, արևելահայ, բարբառներ, ուշ միջնադար:

XVII դարի սկզբներից մինչև դարի կեսերն ընկած ժամանակամիջոցում վաղ աշխարհաբարյան հայերենը բնութագրվում է նրանով, որ «չունի արևելահայերեն-արևմտահայերեն բաժանումը, միավորում է նրանց առանձնահատուկ տարրերը» (Ռ. Իշխանյան): Նոր ձևավորվող գրական հայերենը սկզբնական շրջանում համատեղում էր արևմտահայ և արևելահայ բարբառների լեզվական հատկանիշները, դրա շնորհիվ հասկանալի էր բոլոր հայերին: Սա հենց համարում ենք գրական աշխարհաբարի **միասնականության շրջան**:

Հայերենի գրական երկու՝ արևմտահայ և արևելահայ ճյուղերի ձևավորման և զարգացման ընթացքը ճիշտ հասկանալու համար բազմաթիվ աղբյուրների քննությամբ փորձել ենք ցույց տալ, թե ինչ էր իրենից ներկայացնում այդ «միասնական հայերենը»:

Միաձուլվ հանդես գալու առանձնահատկությամբ XVII-XVIII դդ. ընդհանուր առմամբ տարբերակվում են հայերենի լեզվական մի քանի կենտրոններ. արևմտյան՝ Կ. Պոլիս կամ Փոքր Ասիա, Ղրիմ, Լեհաստան, արևելյան՝ Արարատյան գավառ, Ջուղա, Ղարաբաղ: Հնարավոր է, որ նշված վայրերը, որպես լեզվական կենտրոններ, առանձնանում են (վարչական-տնտեսական կենտրոններ լինելուց զատ) այն պատճառով, որ նշված բարբառներով պահպանվել են մատենագրական զգալի թվով երկեր:

Մեզ հետաքրքրող միասնական լեզվավիճակն անվանելու համար գործածվել են տարբեր տերմիններ՝ աշխարհական և քաղաքական (Հովհաննես Հոլով), գրական լեզու (lingua litteralis), բարբառներ և քաղաքացիական հայերեն (Յոհան Շրյոդեր), աշխարհաբառ և ուսմական լեզու (Մխիթար Սեբաստացի): Միասնական գրական լեզուն թերևս քաղաքացիական հայերենն է. այն միևնույն երկրում և նույնիսկ միևնույն նախադասության մեջ միավորում էր գրաբար, աշխարհաբար և բարբառային տարրերը: Օրինակները խիստ առատ են, բերում ենք տարբեր վայրերում ստեղծված երկերից քաղված մեկ-երկու նմուշ. Արցախ - «Մենք տարակուսեալ եմք, կու դողանք», «ծառայդ Իրանու երկրումս ինչ որ արարեալ եմ և ասացեալ», «եկեղեցական դասիւք եկինք դէմ ընդ յառաջ, խրախոյս բարձեալ ձայն արձակեցինք ընդ միմեանս»: Ագուլիս - «այս գետս գնում այ Ամսրդամ», «թագաւորն ուզում չէր»: Ջուղա - «Սուրբ Աթոռդ պայծառ և անկարօտ յամենայնի կու մնայ», «ըստ հաճոյիցն Աստուծոյ գործ նուազում է»: Երուսաղեմի Ս. Հակոբ մայրավանքի դիվան - «չեմ կարեր գալ, ի հետ հաճոցն գալոց եմ, թէ տեսնում», Կարին - «սաստիկ սով է եղեար, որ մարդ շուն և կատու կերեալ են» և այլն:

Միասնականութունը վերաբերում է նաև իմաստափոխությանը: Այս շրջանից պահպանված իմաստափոխ բառերը դեռևս արևմտահայ կամ արևելահայ տարբերակում չեն ճանաչում: Օրինակ՝ **երկաթ** (նավի խարիսխ), **խմել** (հարբել), **ձգել** (թողնել, լքել), **տուփ** (նավակ) և տասնյակ այլ բառեր հավասարապես գործածվում են երկու ճյուղերը ներկայացնող բնագրերում:

Թեման արդիական է թե՛ գիտական-բանասիրական, թե՛ գործնական նշանակությամբ: Հարցի ուսումնասիրմամբ պարզաբանվում է, որ՝ ա) գրական հայերենի երկու ճյուղերը ծագել են երբեմնի միևնույն հիմքից, բ) մինչ գրական լեզվի ձևավորվելը գոյություն է ունեցել միջբարբառային հաղորդակցության ընդհանուր

լեզու, որ հասկանալի է եղել Կ. Պոլսում, Կարինում, Ջուղայում, Արցախում, Արարատում և այլուր, գ) ուշ միջնադարում կամ վաղ աշխարհաբարյան շրջանում հայերի լայն շրջանների մոտ գուցե դեռևս չգիտակցված, սակայն միտում է եղել ընդհանուր մի լեզու ունենալու՝ չնայելով քաղաքական, աշխարհագրական և այլ տեսակի խոչընդոտներին:

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև մեր լեզվի երկու ճյուղերին վերաբերող երկու այլ իրողություն՝ ա) 19-րդ դարում արևմտահայերենն ու արևելահայերենը միավորելու ջստացված փորձերը և բ) Սփյուռքի գաղթօջախներում հայերենի երկու ճյուղերի փոխներթափանցման ընթացքը մեր օրերում:

THE NEW COMMON LITERARY ARMENIAN LANGUAGE IN THE 17-18TH CENTURIES

Poghosyan N. (Yerevan State University, Armenia)